

«ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ» սպառողական վարկերի տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման կարգը

Տարեկան փաստացի տոկոսադրույքի բանաձևի հաշվարկման բացատրություններ

Բանկը իր կողմից տրամադրած վարկի դիմաց հաշվարկում է տարեկան փաստացի տոկոսադրույք (Annual Percentage Rate կամ APR)՝ սպառողի կրեդիտավորման ընդհանուր ծախս՝ արտահայտված տրամադրված կրեդիտի տարեկան տոկոսով և հաշվարկված՝ հիմք ընդունելով հետևյալ բանաձևը՝

$$A = \sum_{n=1}^N \frac{K_n}{(1+i)^{\frac{D_n}{365}}}$$

որտեղ՝

- **i** – տարեկան փաստացի տոկոսադրույք,
- **A** – վարկի սկզբնական գումար,
- **n** – վարկի մարմանն ուղղված վճարի թիվ,
- **N** – վարկի մարմանն ուղղված վերջին վճարի թիվ,
- **K_n** – վարկի մարմանն ուղղված n-րդ վճարի գումար,
- **D_n** – վարկի տրամադրման օրվանից մինչև վարկի մարմանն ուղղված n-րդ վճարի կատարման օրն ընկած ժամանակահատված՝ արտահայտված օրերի թվով:

Տարեկան փաստացի տոկոսադրույքի հաշվարկման օրինակ

Ենթադրենք բանկը սպառողին տրամադրում է «ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ» սպառողական վարկ հետևյալ պայմաններով՝

- Վարկի գումար – 400,000 ՀՀ դրամ,
- Անվանական տարեկան տոկոսադրույքը – 12 %,
- Վարկի մարման ժամկետը – 84 ամիս, որից 12 ամիսը ուսումնառության շրջան
- Վարկի մարման եղանակը – անուիտետային (վարկի գումարի և տոկոսագումարի հանրագումարը մարվում է ամենամսյա հավասարաչափ), ուսումնառության շրջանում (12 ամիս) մարվում է միայն տոկոսագումար:

Վարկի տրամադրման դիմաց այլ վճարներ չկան:

Տարեկան փաստացի տոկոսադրույքը հաշվարկելու համար անհրաժեշտ է որոշել վարկի ամսական մարվող տոկոսագումարի չափը, որը սպառողը պետք է մարի ուսումնառության 12 ամսում, այն կազմում է՝ 4,000 ՀՀ դրամ:

Անուիտետային եղանակով վարկի մարման դեպքում անհրաժեշտ է որոշել վարկի մարմանն ուղղված ամսական վճարի գումարը, հետևյալ բանաձևով՝

$$K = A \times \frac{(1+R)^P \times R}{(1+R)^P - 1}$$

Որտեղ՝

- **K** – ամսական վճար,
- **A** – վարկի սկզբնական գումար,
- **R** – տոկոսագումար (նշվում է ամսական տոկոսադրույքը, օրինակ՝ 12% / 12 = 1%),
- **P** – վարկի մարման ժամկետ (ամիսներով),

Ուումնառության ժամկետից հետո մնացած 72 ամիսների համար՝ յուրաքանչյուր ամիս վարկի մարման գծով ամսական վճարը կկազմի՝

$$400,000 \times \frac{(1+0.01)^{72} \times 0.01}{(1+0.01)^{72} - 1} = 7,820$$

Այսպիսով՝ վարկի տարեկան փաստացի տոկոսադրույքը կհաշվարկվի հետևյալ կերպ՝

$$400,000 = \frac{4,000}{(1+i)^{\frac{0}{365}}} + \frac{4,000}{(1+i)^{\frac{30}{365}}} + \dots + \frac{7,820}{(1+i)^{\frac{395}{365}}} + \dots + \frac{7,820}{(1+i)^{\frac{2555}{365}}}$$

$$i = 0.1269 \times 100 = 12.69\%$$

Բանկի կողմից առաջարկվող վերոհիշյալ պայմաններով վարկի տարեկան փաստացի տոկոսադրույքը կկազմի 12.69%: